

ներուն: Գաղաքացիք յամօթոյ նախա-  
տանաց աւելի կը վախեն քան յօրի-  
նաց. և օրինաց աւելի կ'անսան քան  
ճարտասանից. միով բանիւ, իշխանու-  
թիւնը սակաւուց է և առաքինեաց  
միայն»: Այս խօսքերս թերևս չափա-  
զանցք են. Սան Մարինոյ ալ ինչպէս  
ուրիշ տեղ, յիրաւի շատ բարի մարդիկ  
կան, չարք ալ պակաս չեն:

Փարիզ դեսպան մը ունին Դուքս ա-  
նունով: Դարձեալ կարգ մը աւսպետաց  
Սրբոյն Մարինոսի կոչուած, որ է ժա-  
պաւէն մը հինգ երկնագոյն զուգահե-  
ռական դժերով. արծաթասպիտակ են,  
թակայի վրայ, այս նշանադրութեամբս.

Reliquo vos liberos ab utroque homine,  
Թողում զձեզ ազատ յերկոցունց իսկ արանց,

սրբոյն Մարինոսի առ իւր ընկերս ուղ-  
ղած վերջին խօսքերը, Ոչ վարչութիւն,  
ոչ վճիռք, ոչ զլխաւոր ժողովք, ոչ բա-  
նակ, ոչ օրէնսդրութիւնք, ոչ մրցա-  
նակք պատուոյ և ոչ տէրութեան ներ-  
կայացուցիչ, կը պակսի այս փոքրիկ հա-  
սարակապետութեան: Չունի միայն ոչ  
տպարան, ոչ լրագիր, ոչ գրատուն և  
ոչ թղթաբեր և թղթատար մը: Երկու  
գիտնականք Տէրփիքոյ և Պորկէզի կոմ-  
սերը Տիտան լեռան վրայ ընտրեցին  
իրենց ուսումնական մենարաններն:

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

ԱՌ ՍԻՐՈՂՍ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՅ

ՅՈՒՇԻԿՔ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՅՈՑ ԵՐԿԱՀԱ-  
տոր գրութեան յետին թերթերը մամ-  
լոյ կնիքը կ'ընդունին որ հայրենա-  
փրաց ընթերցմանը ընծայուին: Այս  
գրութեանս մէջ հեղինակին գիտաւո-  
րութիւնը մեր հայրենեաց քաղցր և  
միանգամայն տրտմալի յիշատակները  
արձանագրելն է. և անօգուտ է զուր-  
ցել ինչպիսի զգածեալ ոգւով՝ աչաց  
առջին կը ջանայ գնելու նկարագրաբար  
այն դարերն ու ժամանակները, յորս  
փայլեցան մեր նախնի զիւցազուկը,  
իրենց գովելի գործոց պանծալի յիշա-

տակը մեզի աւանդելով որ լաւութեան  
հետոցը հետևող ըլլանք: Գեղեցիկ կը  
նկարագրէ հեղինակը մեր մեծանձն  
զիւցազանց հայրենասիրութիւնը, որ  
իրենց հայրենեաց աւանդըր ոգւով  
չափ ջանացին պաշտպանել, անոնց հա-  
մար արհամարհելով փառքը, մեծու-  
թիւնը և կեանքն իսկ՝ բարեաց քաղ-  
ցրագոյնը: Ուստի և զանոնք նկատելով  
հեղինակս իր վերջաբանին մէջ կ'ըսէ.  
« Հաւատարիմն Աստուծոյ, և իր ան-  
ձին, հաւատարիմ է և հայրենեաց: —  
Անհաւատարիմն հայրենեաց՝ չէ հաւա-  
տարիմ և իր հոգւոյն և ոչ երկնից: —  
Ամենէն սուրբ և ազնիւ գործ և աշխա-  
տանք երկրիս վրայ՝ երկնից և հայրե-  
նեաց համար եղածներն են »:...

Եւ ազգասէր հայն բարձրաձայն կը  
պարծի այդպիսի հայրենասէր զիւցա-  
զանց սերունդ ըլլալ. վասն զի անոնց  
աւանդած հայրենասէր կայծը իր սըր-  
տին մէջ կը զգայ: Անոնք անցան յի-  
րաւի, ծածկեցան դարուց հանդերձին  
տակը. այլ իրենց աննկուն ոգին դեռ  
ևս ամենայն հայ սիրտ կը բորբոքէ, և  
ածինացեալ ոսկերքը կը խրախուսեն  
զմեզ, իրենց որդիքը, օրինակ տալ աշ-  
խարհի որ չենք ուրացեալ անոնց փա-  
ռաց շաւիղը, անոնց հայրենասէր ոգին:

Կը յուսանք որ այս հեղինակու-  
թեանս հրատարակումը ընելով հաճոյ  
բան մը ըրած կ'ըլլանք հայրենական  
աւանդութեանց պաշտպան ազգասի-  
րաց. ուստի և այսու վստահութեամբ  
իրը ճաշակ մը կը հրատարակենք հոս  
հեղինակին վերջաբանը:

Վերջաբանս առ Հայկակ:

Ահա վերջին խորոյկն է՝ որ կու մտայ մեր հայ-  
րենական հսկմանց վառարանին անկիւնը, ով Հոյ-  
կակ. և այս ճաթառող ու վառվառուն մախրիքս՝  
վազը առտու պիտի գտուին ցուրտ մոխրիք. և  
այնպէս միան, մինչև որ տարւոյն երեք եղանակ-  
ներն ալ գառնան լրանան, և նորէն գայ չորրորդն:  
Եւ երբ նորէն գառնայ գայ այս եղանակս, ար-  
գեօք մենք ալ նորէն պիտի գանենք զերար՝ մեր  
վառարանին քով:...

Ահա գարնանաբեր լուսնին նորարծարծ ճա-  
ռագայթներն՝ պատուհանաց ապակիներէն ներս  
ցայտելով, կու հրաւիրեն զմեզ բանալ փական.

քը, երևել դուրս, տեսնել նորէն զքնութիւն: Ինուութիւն նորոգեալ, իբրև իր ստեղծմանը առաւօտուն, իբրև առաջին իրիկունը, յորում նոր վառած լուսնին ճաճանչից տակ՝ կու հանդէր խաղաղիկ, ինչպէս սպիտակազգեստ մօր մը շարչից մէջ՝ անգրանիկն անուշաքուն:...

Այլ մինչքեռ հաս այսպէս պայծառ ծագէ և ծիծաղի լուսնակս, միթէ երկրիս ուրիշ կողմեր ալ չէն թաղուած թաթղուած մթութեան մէջ: Միթէ երկրիս քրոջ՝ ծիածաւալ ծովուն ծովի ծովի ծոցերուն մէջ՝ չկան ալէկոծ նաւեր՝ որ անդունդէ անդունդ սահելով՝ գոնէ ինկնելու վրէժն յատակը տեսնելու համար՝ աստղիկ մը լուսիկ մը կու մուրան վերէն, և չեն տեսներ:...

Այսպէս է կենաց ընթացքն. երբեմն լոյս և երբեմն մութ. և միշտ հարկ է երթալ, ինչուան որ հասնինք արարչադիր կէտը: — Սակայն ով որ զերկիրս յատակ մը կու ճանչնայ այն տաճարին՝ որոյ վերնայարկն է երկին, միշտ անխուով կ'երթայ, խաղաղ կ'ապրի:

Քանի որ սրտի սիւնակն շիտակ է, և հոգւոյն կարմիր կանթեղն վառ է, յաջող է մարդուս:

Մեր խաբոյլին կու մտրի. լուսնակն ալ կու ծածկի կու մաշի: Սիրալիր սիրտն անսպառ է: Անմահութեան ակնկալու հոգին՝ երջանիկ է:

Հաւատարիմն Աստուծոյ և իր անձին՝ հաւատարիմ է և հայրենեաց: Անհաւատարիմն հայրենեաց՝ չէ հաւատարիմ և իր հոգւոյն և ոչ երկնից: — Ամենէն սուրբ և ազնիւ գործ և աշխատանք երկրիս վրայ՝ երկնից և հայրենեաց համար եղածներն են: Թէպէտ և զանազան են հասակք և վիճակք, այլ ամենքն ալ ըստ չափու և ըստ վիճակի իւրեանց՝ պարտական են երկնից և հայրենեաց:...

Ահա կու հնչէ հասարակ գիշերուան պահն:...

Մեր միայնախօսութեանց ժամերն անցան. կու սկսին ժամք գործոց և աշխատութեանց: Վաղն, նոր օր, նոր գարուն, ՚ի նոր կեանս կու հրաւիրէ զքեզ, Հայկազ:

Կորաբողոք ընութեան մէջ բացուած՝ նոր կոկոն մարդկութեան, ծաղիկ Հայութեան, առոյգ հասակաւ ձևացեալ, արգ կու վայլէ որ ձևանաս քաղաքական կենօք. վիճակ մը ընտրելով, և գործ մը կատարելով յերկրի, յօգուտ ընտանեաց և հայրենեաց, և հաճոյ երկնից:

Հարկ է որ մնաս բարով ըսնք իրարու, անմուռաց պահելով մեր հայրենեաց Յուշիկքը: Առնում ես իմ հասակիս ցուպը, և իջնեմ բլրէս վար. առնուս գու ալ հասակիդ յարմար աշխատութեան գործիդ, օրհնել տաս երկնից, և երեսու գէպ ՚ի վեր, ՚ի բլուրն կենաց: — Արդ սուրբ հոգիք նախնեաց մերոց՝ քեզ բարեխօս և պաշտպան. հայրենեաց շաղկէն՝ անչէզ ըլլայ քու վիճակիդ ճամբան. բաղդդ՝ յերկրէս յերկնք հասնի անխափան:

Սակայն ինչ ալ որ ըլլայ քու վիճակդ կամ գործդ, յիշէ Հայկակ, որ գործն՝ իրմով չէ ազնիւ կամ մեծ, այլ ընողն է որ կ'աղնուացընէ կու սրբացընէ զգործը: — Առանց գործողի՝ գործք մեռեալ սոսկ անուռն մ'են. մարդս՝ զանուշը բան կ'ընէ, բանը՝ գործ, գործը՝ կենդանութիւն, և զկենդանութիւնն՝ անմահութիւն:

Յաջողութիւնն շատ հեղ երկնից շնորհք մ'է.

բայց առանց երկրիս վրայ աշխատելու՝ վերէն յաջողութիւն չիջներ: Մանաւանդ թէ յաջողութիւնն պատրաստ է իբրև զարև և զանձրև. բայց եթէ ագարակն սերմանուած չէ՝ ինչ բուսցընեն երկնից շողն ու ցօղն:

Մարդս փոքրիկ արարած մ'է, բայց ոտքերն երկրիս ամեն կողմն ալ կըրնան կոխել. երկու ձեռքովը կըրնայ ծայրէ ՚ի ծայր աշխարհակալել. սըրտին՝ պզտիկ կու գայ տիեզերաց սահմանն. միտքն՝ անսահմանութեան մէջ ճամբայ կու բանայ. հոգին՝ կու տիրէ երկնից. սէրն՝ կու հասնի Արարչին առջև, և կ'ըսէ. Ահաւասիկ եմ:

Փոքրիկ արարածն այն մարդ՝ մեծ աշխարհք մ'ալ է ինքնին. վասն զի Աստուծոյ դասաակերտ է, Աստուծոյ պատկեր է, թէ և աղաւաղեալ. և ունի սկզբնատրպին զօրութիւնը:

Արարչագործ մատանց բարձրագոյն կերտուածքըն՝ չեն Այրարատեան կատարքն կամ գագաթն Եմաւոնի, այլ ուսերուդ վերև կանգնած իմաստից տաճար՝ գլուխդ է. բարձր և բարակ բանուած: Զկայ ծաղիկ արժանաւոր այգոր պսակ ըլլաւու. ոչ ոսկին և արծաթ՝ որ հողէ կ'երնեն, ոչ ծիրանի ծովերէ խալած բուստ և մարգարիտք: Ո՛հ. գեղեցիկք են մայիսի առաւօտուն ցօղակաթ վարդակարմիր փնջիկքն այլ՝ դալար ճակտի մը բողբոճ. սակայն շատ աւելի պայծառ է ամբթղածութեամբ խայծեալ երեսն. և աւելի ազնիւ՝ անոր վրայ շարուած աշխատութեան կայլակներն:

Կենաց կարևոր և վայելուչ պիտոյքը լեցընելն աւելորդ երկրաւոր շահք և վաստակք՝ անարդ և անիրաւ են այնպիսի գլխոյ մը, որ երկնից և հայրենեաց մաքուր իմաստներովը լցուած է:

Եթէ քաղաքական կեանք օրինաւոր են ՚ի վերայ երկրի, անհրաժեշտ պարտք են և հայրենեաց ջանքն:...

Լալով կու ծնանիմք, խաղով կու մեծնամք. աշխատութեամբ պէտք է մարդ ըլլանք. մէկ ձեռքով մեզի, մէկ ձեռքով մեզի նմանեաց օգնեմք. սիրով կենակցինք, պատուով ապրինք, յուսով ծերանամք, գոհութեամբ մեռնինք. սրբութեամբ աւանդենք փչողին՝ մեր շունչը. թաղուինք օրհնութեամբ. մնամք ՚ի հայրենիս՝ հայրենեաց չափ, և յերկնիս՝ Աստուծոյ չափ:...

Ահա ազգք և ազնիւք, մեզի մօտ և հեռի, Հայկակ, ամենքն զբաղած են իրենց հայրենի ագարակը շէնցընելու. և անգրանիկն ազգաց՝ մեր ազգն՝ կըրնայ ըլլալ յետամնաց:.. Մարդ, սիրտ ունող մարդ՝ չի կըրնար ըսել զայս՝ առանց ստիպելու, թող թէ Հայ մարդ:

Ա՛ռ և գու ուրեմն, ով Հայկակ, քու վիճակիդ յարմար աշխատութեան գործիդ, վերցնուր յերկնք, օրհնել տուր. և աշխատէ: Աշխատէ յերկրի, միտքդ յերկնս, սիրտդ հայրենեացդ վրայ:

Առանց երկնից օրհնութեան՝ չի յաջողիր գործ հայրենեաց ՚ի վերայ երկրի: Զոր երկնք չօրհնէր, ՚ի զուր օրհնեն և հայրենիք. և զոր չեն օրհնէր հայրենիք՝ նա չօրհնուիր և յերկնից:

Վու բուսնի և սերմն ատելութեան, կու ծածկէ դաշտեր. սպասէ, և կու տեսնես փուշ և տատասկ:

Սիրոյ սերմին՝ թէ և կորագցեալ երկրի մ'ա

անդուի, անխոնջ և ամուր արօրին տակ, բերան  
նախն մշակին համբերութեամբ, վերջապէս կու  
ծի, ծաղկի, պողպետի և անուցանէ:

Եւ մշակն մշակաց, սրուն ագարակն է բոլոր  
աշխարհս, պատուիրեց մաճակալին<sup>1</sup>, շտակ  
գծել ու քշել, և ետև չնայիլ. երթալ յառաջ,  
և շտակ երթալ: Ո՛հ. երթալ և լալով, եթէ  
հարկ է, երթալ և ցանել. կու հասնի օրն ալ խըն  
աալով հնձեղու, որաներով շարկած, ծաղիկնե  
րով պատկուած դառնալու<sup>2</sup>:

Ճամբրիա հայրենասիրութիւնն չէ ասուպ կամ  
փայլակ մը յանկարծ երեցող և անցնող. ոչ հուր  
մոլի և թափառիկ, և ոչ կայծակն անկուշտ այ  
րող լափող. այլ հանգարտ ջերմութիւն մը, յըս  
տակ լուսով, անսագիւտ խղճով:...

Ո՞վ անձնուրաց ոգի, բարեխնդիր հայրենասի  
րութիւն. դու պատրաստէ, վառէ սրբէ զսիրտ  
Հայկակայ: Քեզմով վառուած սիրան՝ անխայթ  
և անմուխ լոյս կ'արձակէ. և եթէ խարկի մըրկի  
սիրան, և անցնի երկրաւոր մասամբն, երկնու  
նակ մասն՝ մնայ ՚ի վերայ հայրենեաց, որպէս հոս  
մըշկի և կնգրբկի:

Եւ շատ սեղաններ, շատ տապաններ, շատ քա  
րեր ու հողեր կան ՚ի Հայաստան, ուսկից գարէ  
գար և անդադար կու ծիսէ հոսն անուշութեան,  
հոսն հայրենեաց. զոր չեն կրնար ջնջել ոչ զէնք  
և ոչ քէնք:

Վասն զի մեր առաքինի և ճամբրիա, ընկերա  
սէր, ազգասէր, որդեսէր և հայրասէր նախնիքն,  
այն երկրին վրայ իրենց պարկեշտ նշխարքք թող  
լով, անմահութեան շնչով վերէն անոր վրայ մշտ  
կու շնչեն և կու շրջնեն:

Նրնչեցէք ը՛վ շունչք մտաբացք, սրտարծարք,  
հոգեվառք. շնչեցէք հոգիք Գրեգորեանց, Ներսի  
սեանց, Սահակեանց, Մովսիսեանց, Ղեւոն  
դեանց, Վարդանանց, Վահանանց, Սմբատաց,  
Աշոտց, Լեւոնեանց և Հեթմեանց. սուրբ թա  
ղաւորք, հայրապետք, վարիչք և վարդապետք  
Հայոց, շնչեցէք յերկնից յերկիր: Թառնուի՛ ձեր  
երկնաւոր շունչն՝ յերկրաւոր շունչ Հայկակայ.  
որ երբ հասնի աւանդելու իր վերջին շունչն ալ՝  
եթէ հանգարտ ու հեզիկ, և եթէ հրահատ ու  
հառաչածայն, հաւասարապէս խառնուի՛ ձերի  
ներուն հետ:

Եւ երբ իր օրական և տարեկան շրջաններուն  
պէս՝ երկիրս իր բազմադարեան շրջանն ալ աւար  
տելով՝ գազրի և կտորի, և նոր երկրի մը հրաւի  
րակ փողն հնչէ, այս հին լուծեալ և լքեալ եր  
կրիս վերջին արձագանգաց միջէն՝ վերջնագոյն ար  
ձագանգ մ'ալ ըլլայ քուկդ, սուրբ սէր հայրե  
նեաց:...

Եւ, ո՛հ, թէ այն խորին և լոխ արձագանգաց՝  
նուազ վանդիւն մ'ըլլար այս իմ քեզի նուիրածս,  
Հայկակ, ՅՈՒՇԵՒԿԵ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՀԱՅՈՑ:

### ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՋ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԻԱՑԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ

(Տես երես 90)

Երկրորդ օրը, 21 փետրուարի, ա  
ռաւօտեան ժամը իրեքին, շոգենաւուն  
կրակարանները կ'աղմկէին. ժամը հին  
գին խարխիսը վեր առնուելով՝ Բիզու  
լիւղ իր պտուտակաւոր անուին զօրու  
թեամբը, դէպ ՚ի Թայմզին բերանը յա  
ռաջեց:

Պէտք չկայ ըսելու որ նաւուն վրայ  
եղած խօսակցութիւնները բոլորը տղ  
զոր Ֆէրկրսընի արչաւանքին վրայօք  
էին: Զինքը տեսնողը և իրեն խօսքե  
րուն մտիկ ընողը՝ անանկ վստահու  
թիւն մը կը ստանար, որ շուտ մը, բաց  
՚ի Սկովտիացիէն, ոչ ոք կը տարակու  
սէր որ իր ձեռնարկութեանը մէջ պի  
տոր չյաջողի:

Ճամբորդութեան անգրաղ ժամե  
րուն ատեն, տղքորը սպայից խումբը  
չորս դին ունենալով, կատարեալ դա  
սախօսութիւն մը կ'ընէր աշխարհա  
գրութեան վրայ: Այն երիտասարդ  
ները կ'ոգևորէին անոր քառսուն տա  
րիէ ՚ի վեր Ափրիկէի մէջ ըրած գիւ  
տերուն վրայ, կը պատմէր անոնց Պար  
թի, Պրոդընի, Սբիեր և կրէնդի խուզ  
արկութիւնները, կը նկարագրէր ա  
նոնց այն խորհրդաւոր աշխարհը ինչ  
պէս բաց ամենուստեք՝ գիտութեան  
քննութեանցը: Հիւսիսակողմը, երի  
տասարդն Տիւվէյրիէ խոյզ և խնդիր  
կ'ընէր Սահարան, ու թուարեկաց զը  
խաւորները Բարիզ կը տանէր: Գաղղիոյ  
տէրութեան հրամանաւ երկու արչա  
ւանք կը պատրաստուէին, որ մէկը հիւ  
սիսէն իջնելով, միւսը արևմուտքէն գա  
լով թօմսուքառ պիտոր հանդիպէին:  
Հարաւէն, անխոնջն Լիվինկսդըն միշտ  
դէպ ՚ի հասարակած կը յառաջադիմէր,  
և 1862ին մարտ ամսէն ՚ի վեր, Մա  
քէնզիի ընկերութեամբ Ռովունիա դե

1 Ղուկաս, Թ. 62: 2 Սաղմոս ձԻԵ. 6: